

ՄՈՒՐԱԴ ՄԱՐԳԱՐԻ ՀԱՄԱԹՅԱՆ

Մուրադ Հասրաթյանը ծնվել է 1935թ. Երևանում: 1952թ. ոսկե մեդալով ավարտել է Երևանի Խ. Աբովյանի անվան արական միջնակարգ դպրոցը, 1958թ. գերազանցության



դիպլոմով՝ Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ստանալով ճարտարապետի որակավորում: Ընդունվել է աշխատանքի «Երևաննախագիծ» ինստիտուտում՝ հեղինակելով բնակելի և վարչական շենքեր, դպրոցներ, ավաններ: 1964թ. մինչև օրս աշխատում է ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտում, 1988 թ.՝ որպես ճարտարապետության բաժնի վարիչ:

Մ. Հասրաթյանի գիտահետազոտական գործունեությունն ընթացել է երկու հիմնական ուղղություններով՝ հայկական ճարտարապետության ուսումնասիրություն և դրա նվաճումների ու ինքնատիպության ներկայացումն աշխարհին:

Նա իր գիտահետազոտական աշխատանքում կարևորել է վաղմիջնադարյան Հայաստանի շինարվեստի ուսումնասիրությունը: Նշենք՝ Մոսկվայում 2000թ. լույս տեսավ Մ. Հասրաթյանի «Վաղ քրիստոնեական հայկական ճարտարապետությունը» հիմնարար աշխատության ծավալուն հատորը (ռուսերեն և անգլերեն), որտեղ ներկայացվում են հայկական ճարտարապետության ինքնուրույնությունն ու ինքնատիպությունը, կարևոր ներդրումը համաքրիստոնեական շինարարական արվեստում:

Մ. Հասրաթյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում հարատև գտնվել է Արցախի ճարտարապետության ուսումնասիրությունը: Նրա տևական ուսումնասիրությունների հանրագումարը դարձավ 1992թ. լույս տեսած «Հայկական ճարտարապետության Արցախի դպրոցը» մենագրությունը, որը գիտականից բացի, իր ընդարձակ ռուսերեն համառոտագրությամբ, ունեցավ կարևոր քաղաքական նշանակություն ևս:

Մ. Հասրաթյանը մեծ ներդրում ունի ուշ միջնադարի (XV-XVIIIդդ.) հայկական ճարտարապետության ուսումնասիրության գործում: Նա առաջինն է լայնամասշտաբ և համակողմանի հետազոտել ու ներկայացրել տվյալ ժամանակաշրջանի հայկական շինարարական արվեստը:

Մ. Հասրաթյանը ՌԴ ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր է, ՀՀ վաստակավոր ճարտարապետ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, ճարտարապետության միջազգային ակադեմիայի թղթակից անդամ:

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

(2014-2018թթ.)

1. Ճարտարապետ Տրդատ Անեցի.- «Հուշարձան» (տարեգիրք), Երևան, 2014, էջ 88-98:
2. Հայկական մշակույթը: Քաղաքաշինություն և ճարտարապետություն, «Հայոց պատմություն», հատոր II, գիրք երկրորդ (IX դ. կես –XVII դ. առաջին կես), Երևան, 2014, էջ 482-492:
3. Հայ մշակույթի վերելքը XIX դ. երկրորդ կեսին և XXդ. սկզբին, ճարտարապետություն, «Հայոց պատմություն», հատոր III. Նոր ժամանակաշրջան (XVIIդ. Երկրորդ կես – 1918թ.), Երևան, 2015, էջ 213-220:
4. Հայկական ճարտարապետական հուշարձանների ավերումը թուրքերի կողմից.- «Պատմաբանասիրական հանդես», 2015, № 2, էջ 3-12:
5. Խորհրդահայ մշակույթը: Ճարտարապետությունը, «Հայոց պատմություն», հատոր IV, գիրք երկրորդ: Նորագույն ժամանակաշրջան (1945-1991թթ.), Երևան, 2016, էջ 440-451:
6. Հայաստանի XVII-XVIIIդդ. ճարտարապետության գեղարվեստական արտահայտչականության միջոցները.- «Գեղարվեստի Ակադեմիայի տարեգիրք», 2016, № 4, էջ 40-54:
7. Արտազի Ս. Թադեի վանքի ճարտարապետությունը և պատկերաքանդակները.- «Արշալույս քրիստոնեության հայոց», Երևան, 2017, էջ 358-372:
8. Ուշ միջնադարի հայկական ճարտարապետության պատկերաքանդակները.- «Գեղարվեստի Ակադեմիայի տարեգիրք», № 5, Երևան, 2017, էջ 8-27:
9. Միջնադարյան Հայաստանի բերդ-եկեղեցիները.- «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, 2018, № 1, էջ 139-148:
10. Զարգացած միջնադարի հայկական երկհարկ գմբեթավոր եկեղեցիները.- «Հուշարձան» (տարեգիրք), Երևան, 2018, էջ 53-74:

МУРАД МАРКАРОВИЧ АСРАТЯН

Родился в 1935 г. в Ереване. Окончил с золотой медалью среднюю школу им. Х. Абовяна г. Еревана, в 1958 г. с отличием окончил Ереванский политехнический институт им.



К. Маркса, получив специальность архитектора. Поступил на работу в институт “Ереван-проект”, проектировал жилые и административные здания, школы, поселки. С 1964 г. по сей день работает в Институте искусств НАН РА, с 1988 г. - как заведующий отделом архитектуры.

Почти полувековая научно-исследовательская деятельность М. Асратяна протекала по двум основным направлениям: изучение армянской архитектуры и представление миру ее достижений и своеобразия.

М. Асратян в своей научно-исследовательской работе особое внимание уделял изучению раннесредневекового строительного искусства Армении. В 2000 г. в Москве вышла в свет объемная фундаментальная монография М. Асратяна “Раннехристианская армянская архитектура” (на русском и английском языках), где представлена самобытность армянской архитектуры, ее важный вклад в общехристианское строительное искусство.

В центре научных интересов М. Асратяна постоянно находилось изучение архитектуры Арцаха. Обобщением его длительных исследований стала вышедшая в свет в 1992 г. монография “Арцахская школа армянской архитектуры”, которая со своей пространной аннотацией на русском языке помимо научного имеет и важное политическое значение. Внушителен вклад М. Асратяна в деле изучения армянской архитектуры позднего средневековья (XV-XVIII вв.). Он первым широко и разносторонне исследовал и представил армянское строительное искусство данного периода.

М. Асратян – доктор архитектуры РФ, профессор, заслуженный архитектор РА, член-корреспондент НАН РА, лауреат Государственной премии РА, член-корреспондент Международной академии архитектуры.

СПИСОК ИЗДАНЫХ РАБОТ

(2014-2018гг.)

1. Ճարտարապետ Տրդատ Անեցի.- «Հուշարձան» (տարեգիրք), Երևան, 2014, էջ 88-98:
2. Հայկական մշակույթը: Քաղաքաշինություն և Ճարտարապետություն, «Հայոց պատմություն», հատոր II, գիրք երկրորդ (IX դ. կես –XVII դ. առաջին կես), Երևան, 2014, էջ 482-492:
3. Հայ մշակույթի վերելքը XIX դ. երկրորդ կեսին և XXդ. սկզբին, Ճարտարապետություն, «Հայոց պատմություն», հատոր III. Նոր ժամանակաշրջան (XVIIդ. Երկրորդ կես – 1918թ.), Երևան, 2015, էջ 213-220:
4. Հայկական ճարտարապետական հուշարձանների ավերումը թուրքերի կողմից.- «Պատմաբանասիրական հանդես», 2015, № 2, էջ 3-12:
5. Խորհրդահայ մշակույթը: Ճարտարապետությունը, «Հայոց պատմություն», հատոր IV, գիրք երկրորդ: Նորագույն ժամանակաշրջան (1945-1991թթ.), Երևան, 2016, էջ 440-451:
6. Հայաստանի XVII-XVIIIդդ. ճարտարապետության գեղարվեստական արտահայտչականության միջոցները.- «Գեղարվեստի Ակադեմիայի տարեգիրք», 2016, № 4, էջ 40-54:
7. Արտազի Ս. Թադեի վանքի ճարտարապետությունը և պատկերաքանդակները.- «Արշալույս քրիստոնեության հայոց», Երևան, 2017, էջ 358-372:
8. Ուշ միջնադարի հայկական ճարտարապետության պատկերաքանդակները.- «Գեղարվեստի Ակադեմիայի տարեգիրք», № 5, Երևան, 2017, էջ 8-27:
9. Միջնադարյան Հայաստանի բերդ-եկեղեցիները.- «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, 2018, № 1, էջ 139-148:
10. Զարգացած միջնադարի հայկական երկհարկ գմբեթավոր եկեղեցիները.- «Հուշարձան» (տարեգիրք), Երևան, 2018, էջ 53-74:

MURAD MARGAR HASRATYAN



Murad Hasratyan was born in Yerevan, 1935. In 1952 he left Boy's Secondary school after Kh. Abovyan of Yerevan with a gold medal. He graduated from Yerevan Polytechnic Institute after K. Marx with honors in 1958 obtaining the qualification of an "architect". Murad Hasratyan worked at "Yerevanproject" Institute authoring projects of numerous residential and administrative buildings, schools, townships. Since 1964 he has been working at the NAS RA Institute of Art, from 1988 – as the Chair of the Department of Architecture.

Hasratyan's around half-century research activities mainly passed in two directions: the study of Armenian architecture and presentation of its achievements and uniqueness to the world.

In his research work M. Hasratyan gave much importance to the study of building art of Early Medieval Armenia. In 2000 the fundamental extensive volume "Early Christian Armenian Architecture" (in Russian and English) authored by M. Hasratyan was published in Moscow where the independence and uniqueness of Armenian architecture, as well as its essential contribution to all-Christian building art were presented.

The study of Artsakh's architecture has always been in the center of M. Hasratyan's scientific interests. The crystallization of his years-long study became the monograph entitled "The Artsakh School of Armenian Architecture" published in 1992, which, besides its scientific importance, was also of political significance. M. Hasratyan's input into the study of the Late Medieval Armenian architecture (XV-XVIII cc.) is immense. He was the first to implement a large-scale and comprehensive study of the Armenian building art of the given period and to present it to the world.

M. Hasratyan is a Doctor of Sciences in Architecture in the Russian Federation, professor, RA Honoured architect, NAS RA Corresponding Member, a laureate of RA state prize, a Corresponding Member of the International Academy of Architecture.

LIST OF PUBLICATIONS

(2014-2018)

1. Ճարտարապետ Տրդատ Անեցի.- «Հուշարձան» (տարեգիրք), Երևան, 2014, էջ 88-98:
2. Հայկական մշակույթը: Քաղաքաշինություն և Ճարտարապետություն, «Հայոց պատմություն», հատոր II, գիրք երկրորդ (IX դ. կես –XVII դ. առաջին կես), Երևան, 2014, էջ 482-492:
3. Հայ մշակույթի վերելքը XIX դ. երկրորդ կեսին և XXդ. սկզբին, Ճարտարապետություն, «Հայոց պատմություն», հատոր III. Նոր ժամանակաշրջան (XVIIդ. Երկրորդ կես – 1918թ.), Երևան, 2015, էջ 213-220:
4. Հայկական ճարտարապետական հուշարձանների ավերումը թուրքերի կողմից.- «Պատմաբանասիրական հանդես», 2015, № 2, էջ 3-12:
5. Խորհրդահայ մշակույթը: Ճարտարապետությունը, «Հայոց պատմություն», հատոր IV, գիրք երկրորդ: Նորագույն ժամանակաշրջան (1945-1991թթ.), Երևան, 2016, էջ 440-451:
6. Հայաստանի XVII-XVIIIդդ. ճարտարապետության գեղարվեստական արտահայտչականության միջոցները.- «Գեղարվեստի Ակադեմիայի տարեգիրք», 2016, № 4, էջ 40-54:
7. Արտազի Ս. Թադեի վանքի ճարտարապետությունը և պատկերաքանդակները.- «Արշալույս քրիստոնեության հայոց», Երևան, 2017, էջ 358-372:
8. Ուշ միջնադարի հայկական ճարտարապետության պատկերաքանդակները.- «Գեղարվեստի Ակադեմիայի տարեգիրք», № 5, Երևան, 2017, էջ 8-27:
9. Միջնադարյան Հայաստանի բերդ-եկեղեցիները.- «ՎԷՄ» համահայկական հանդես, Երևան, 2018, № 1, էջ 139-148:
10. Զարգացած միջնադարի հայկական երկհարկ գմբեթավոր եկեղեցիները.- «Հուշարձան» (տարեգիրք), Երևան, 2018, էջ 53-74: